

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
Կենտրոնական բանկում

Նախագահ՝ Արթուր Զավաղյան

« __ » _____ 2008թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ
ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ
ԱՌԵՎՏՐԻ ԿԱՆՈՆՆԵՐ**

Սույն կանոններով սահմանվում է Հայաստանի Ֆոնդային Բորսայում արտարժույթի բորսայական առևտրի կազմակերպման կարգը:

Գլուխ 1. Հասկացություններ

- 1) Սույն կանոններում կիրառվող հասկացություններն ունեն սույն գլխով սահմանված նշանակությունները:
- 2) «Արտարժույթի շուկայի մասնակից». ՀՀ Կենտրոնական բանկը, ինչպես նաև այն ներդրումային ընկերությունները, բանկերը, վարկային կազմակերպությունները և արժույթային դիլերները, որոնք Բորսայի հետ ունեն բորսայական առևտրին մասնակցության վերաբերյալ գործող պայմանագիր, որով վերջիններիս թույլատրվում է մասնակցել արտարժույթի բորսայական առևտրին:
- 3) «Արժույթային դիլեր». ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտարժույթի դիլերային առք ու վաճառքի գործունեության իրականացման լիցենզիա ունեցող անձ:
- 4) «Լոտ». արտարժույթի գնման կամ վաճառքի հայտում նշվող՝ արտարժույթի մեկ անվանական միավորին համարժեք քանակական չափման նվազագույն միավոր:
- 5) «Սպրեդ». արտարժույթի գնման (վաճառքի) լավագույն գնի և/կամ արտարժույթի առևտրի նախորդ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված վերջին գործարքի գնի նկատմամբ առևտրային համակարգ մուտքագրվող գնման (վաճառքի) հայտերի գների տարբերության առավելագույն թույլատրելի սահման:
- 6) Սույն կանոններում կիրառվող այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և Բորսայի կանոններով սահմանված նշանակությունները:
(5-րդ կետի փոփոխությունը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 06.08.2011թ.)

Գլուխ 2. Արտարժույթով առուվաճառքի գործարքների կնքումը

- 1) Բորսայում արտարժույթով առուվաճառքի գործարքներ կարող են կնքվել առևտրային և հետառևտրային նստաշրջանների ընթացքում՝ Բորսայի «Առևտրի ընդհանուր կանոններով» և սույն գլխով սահմանված կարգով:
- 2) Արտարժույթով առևտուրը Բորսան կազմակերպում արտարժույթի հարթակում՝ երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով:
- 3) Բորսայի գործադիր մարմնի ղեկավարի որոշմամբ նախատեսված դեպքերում արտարժույթը կարող է շրջանառվել նաև հասցեական գործարքների հարթակում և ռեպո գործարքների հարթակում:
- 4) Բորսայում արտարժույթով գործարքները կնքվում են լրիվ նախնական դեպոնացմամբ բորսայական առևտրի պայմաններում:
- 5) Լրիվ նախնական դեպոնացման պայմաններում կազմակերպվող արտարժույթի առուվաճառքի գործարքների կնքումն իրականացվում է սույն գլխի 6) - 8) կետերում սահմանված առանձնահատկություններով:
- 6) Արտարժույթի շուկայի մասնակիցների կողմից Բորսայի «Արտարժույթի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններին» համապատասխան կատարված լրացուցիչ դեպոնացումների դեպքում համապատասխան չափով ավելացվում են դեպոնացված արտարժույթի և/կամ դրամային միջոցների մնացորդները:
- 7) Առևտրի մասնակիցը կարող է իր տերմինալից (հեռացված տերմինալից) ամբողջությամբ կամ մասնակի ապադեպոնացնել արտարժույթի շուկայի տվյալ մասնակցի դեպոնացված արտարժույթի և/կամ դրամային միջոցների՝ առևտրային համակարգում տվյալ պահին առկա և ազատ (չարգելադրված) մնացորդը կամ դրա մի մասը, որի դեպքում ապադեպոնացված միջոցների չափով նվազեցվում է դեպոնացված համապատասխան արտարժույթի կամ դրամային միջոցների մնացորդը: Առևտրի մասնակցի կողմից ապադեպոնացված միջոցների հետ կապված հետագա գործառնություններն իրականացվում են Բորսայի «Արտարժույթի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններին» համապատասխան:
- 8) Բորսայի կանոնների համաձայն միաժամանակ արտարժույթի և լրիվ նախնական դեպոնացմամբ կազմակերպվող պետական պարտատոմսերի բորսայական առևտրին մասնակցելու իրավունք ունեցող կազմակերպությունների դեպոնացված դրամային միջոցների մնացորդները կարող են փոփոխվել նաև պետական պարտատոմսերի բորսայական առևտրի ընթացքում արտարժույթի շուկայի տվյալ մասնակցի անունից հանդես եկող առևտրի

- մասնակիցների կողմից մուտքագրված հայտերի և կնքված գործարքների արդյունքում՝ Բորսայի կանոններով սահմանված կարգով:
- 9) Առևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող՝ արտարժույթի գնման (վաճառքի) հայտում նշվող լոտերի քանակը պետք է բազմապատիկ լինի հազարին:
 - 10) Առևտրային համակարգի կողմից չեն ընդունվում և առևտրային համակարգում չեն գրանցվում առևտրի մասնակցի կողմից ներկայացված՝ հազարին ոչ բազմապատիկ թվով լոտեր պարունակող հայտերը, ինչպես նաև արտարժույթի շուկայի տվյալ մասնակցի անունից ներկայացված հայտին արտարժույթի շուկայի նույն մասնակցի անունից ներկայացվող համապատասխան հանդիպակաց հայտերը:
 - 11) Տվյալ առևտրային նստաշրջանի ընթացքում չբավարարված հայտերը չեղյալ են համարվում և հետառևտրային նստաշրջանում չեն ընդգրկվում համապատասխան Հերթերում:
 - 12) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող հայտում նշվում են դրա բավարարման հետևյալ էական պայմանները՝
 - ա) արտարժույթի բորսայական հապավումը,
 - բ) հայտի տեսակը՝ գնման կամ վաճառքի,
 - գ) լոտերի քանակը,
 - դ) հայտի բավարարման ժամանակային պայմանը՝ պահել հերթում կամ հանել մնացորդը:
 - 13) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող բոլոր հայտերը մասնակի բավարարմամբ, անմիջապես ակտիվացվող և լիմիտային հայտեր են, որոնցում նշվող գինը հավասար է տվյալ արտարժույթով տվյալ հետառևտրային նստաշրջանին նախորդած առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված բոլոր գործարքների միջին կշռված գնին:
 - 14) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրված՝ նույն արտարժույթի գնման և վաճառքի հայտերն ընդգրկվում են երկու առանձին Հերթերում՝ ըստ առևտրային համակարգում դրանց գրանցման ժամանակային առաջնահերթության:
 - 15) Հետառևտրային նստաշրջանի ընթացքում առևտրի մասնակիցների կողմից առևտրային համակարգ մուտքագրվող ցանկացած հայտին Հերթում հանդիպակաց հայտի (հայտերի) առկայության դեպքում առևտրային համակարգում գրանցվում է առուվաճառքի գործարքի (գործարքների) կնքում:
 - 16) Եթե հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացված հայտն առևտրային համակարգ մուտքագրվելու պահին Հերթում առկա հանդիպակաց բոլոր հայտերով բավարարվելուց (գործարքների կնքումից) հետո այնուամենայնիվ բավարարվում է մասամբ, ապա մնացորդը (հայտի չբավարարված մասը) ընդգրկվում է Հերթում սույն գլխի 14) կետում նշված կարգով կամ չի ընդգրկվում Հերթում՝ կախված հայտի բավարարման ժամանակային պայմանից:
 - 17) Եթե հետառևտրային նստաշրջանի ընթացքում ներկայացվող հայտին հանդիպակաց հայտեր Հերթում չկան, ապա այն ընդգրկվում է Հերթում սույն գլխի 14) կետում նշված կարգով կամ չի ընդգրկվում Հերթում՝ կախված հայտի բավարարման ժամանակային պայմանից:
 - 18) Տվյալ հետառևտրային նստաշրջանի ընթացքում չբավարարված հայտերը չեղյալ են համարվում և հաջորդ առևտրային նստաշրջանում չեն ընդգրկվում համապատասխան Հերթերում:

Գլուխ 3. Սպրեդ

- 1) Երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով կազմակերպվող արտարժույթի բորսայական առևտրի համապատասխան առևտրային նստաշրջանների համար սպրեդը լավագույն հայտի գնի նկատմամբ սահմանվում է առևտրային նստաշրջանի ընթացքում տվյալ պահին հայտերի համապատասխան հերթում ընդգրկված վաճառքի (գնման) լավագույն գնի ± 1 տոկոսը, ընդ որում՝ առևտրային համակարգում չեն գրանցվում գնման այն հայտերը, որոնցում նշված մեկ լոտի գինը տվյալ պահին առևտրային համակարգում գրանցված գնման լավագույն գնի համեմատ պակաս է 1-ից ավելի տոկոսով, և վաճառքի այն հայտերը, որոնցում նշված մեկ լոտի գինը տվյալ պահին առևտրային համակարգում գրանցված վաճառքի լավագույն գնի համեմատ ավել է 1-ից ավելի տոկոսով:
- 2) Հասցեական գործարքների հարթակում արտարժույթով կազմակերպվող առևտրի համար սպրեդը լավագույն հայտի գնի նկատմամբ սահմանվում է տվյալ պահին երկկողմանի անընդհատ աճուրդի եղանակով արտարժույթի հարթակում տվյալ արտարժույթով

ներկայացված լավագույն հայտերի գների ± 1 տոկոսը, ընդ որում՝ առևտրային համակարգում չեն գրանցվում այն հասցեական հայտերը, որոնցում նշված մեկ լոտի զինը տվյալ պահին առևտրային համակարգում գրանցված գնման (վաճառքի) լավագույն գնի համեմատ պակաս (ավել) է 1-ից ավելի տոկոսով:

- 3) Սպրեդը արտարժույթի առևտրի նախորդ առևտրային նստաշրջանի ընթացքում կնքված վերջին գործարքի գնի նկատմամբ սահմանվում է Օպերատորի դիտորդ խորհրդի որոշմամբ սահմանված կարգով:

(3-րդ կետի լրացումը գրանցված է ՀՀ կենտրոնական բանկում 06.08.2011թ.)

Գլուխ 4. Արտարժույթով կնքված գործարքների կատարումը

- 1) Արտարժույթով առևտրային համակարգում կնքված գործարքների արդյունքում ծագած՝ փոխադարձ պարտավորությունների և պահանջների որոշումը, հաշվանցումը, վճարահաշվարկային փաստաթղթերի պատրաստումն ու վերջնահաշվարկի կատարումն իրականացվում է գործարքի կնքման օրը՝ Բորսայի «Արտարժույթի քլիրինգի և վերջնահաշվարկի կանոններով» սահմանված կարգով:
- 2) Արտարժույթի շուկայի մասնակիցները, որոնց կազմում կամ անունից հանդես են գալիս գործարքի կողմ հանդիսացող առևտրի մասնակիցները, պարտավոր են Բորսային վճարել Բորսայի «Սակագների մասին կանոններով» սահմանված համապատասխան միջնորդավճարները:

Գլուխ 5. Կանոններում փոփոխությունները և լրացումները

- 1) Սույն կանոններում փոփոխություններն ու լրացումները դրա անբաժանելի մասն են և ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով, եթե այլ բան սահմանված չէ սույն կանոններով:

Հաստատված է

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ԲԲԸ
դիտորդ խորհրդի որոշմամբ

_____ **Յոհան Ֆրեդիով**

«13» հունիսի 2008թ.

ք. Երևան

ՀՖԲ-01/093Լ